

# Արցախի Մէջ Գործադուլ Եւ Հաւաք

Արցախի մէջ կը շարունակուի գործադուլը:

Մարզի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ 28 Մայիսին նշուած է հայոց պետականութեան հռչակման օրը: Ժողովուրդը հաւաքուած է քաղաքային Կոմիտէի շէնքին մէջ, ուրկէ սկսած է երթը դէպի Ստեփան Շահումեանի անուան մարզադաշտը, ուր տեղի ունեցած է հաւաք եւ ճառախօսութիւն:

«Արմէնփրէս» կ'ըսէ, որ հաւաքին մասնակիցները մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին Հայաստանի երկրաշարժի, Սումկայիթի եւ Թիֆլիսի իրադարձութիւն-

ներուն անմեղ զոհերուն յիշատակը: Անոնք «միահամուռ հաւանութիւն տուին հայոց պետականութեան վերականգման օրը եւ Եռագոյն դրօշակը որպէս ազգային խորհրդանշան ճանչնալու Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան հրամանագրին»:

Հաւաքին մասնակիցները դիմում կատարած են Մոսկուայի երեսփոխանական համագումարին, խնդրելով որ քննուի Լեռնային Ղարաբաղի խնդիրը, «ամբողջ ժողովուրդի մը նկատմամբ թոյլ տրուած պատմական

(Շար.ը տեսնել 13րդ էջ)

## Արցախի Մէջ Գործադուլ Եւ Հաւաք

(Շար. առաջին էջէն)

սխալն ուղղելու տեսանկիւնէն»։ Շնորհակալութիւն նաեւ յայտնած է այն բոլոր երեսփոխաններուն, մասնաւորաբար Մոսկուայի եւ Լեւինկրատի ներկայացուցիչներուն, որոնք «ըմբռնումով

վերաբացուեցան Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի աշխատաւորութեան սահմանադրական շահերուն», խնդիրը արծարծելով «երկրի պետական իշխանութեան բարձրագոյն մարմնի բարձր ամպիոնէն»։

Գործադուլին պատճառով, սակայն, Մարզը սկսած է տուժել։ Երկաթուղային կայարանը կուտակուած է ժողովրդատնտեսական 120 վակոն բեռ։ Մտահոգութիւն կը պատճառէ նաեւ գիւղատնտեսական կարգ մը ճիւղերու – ինչպէս կերարտադրութեան – մէջ ծագած բարդ իրավիճակը։